

ՕՇԻՆ ՔԱՂԱՆՈՐԻՆ ՕԾՄԱՆ ԱՐԾԱՔՆԵՐՈՒ ՂՐԱՄԱԳԻԼՈՒ ԱՐ

ԶԱՐԵՀ ՊՏՈՒԿԵԱՆ

Քանի մը տարի առաջ երբ Բարիզ կը գտնուէի, այցելեցի աշխարհածանօթ հայ դրամագէտ եւ դրամավաճառ Տիկին Ն. Գափամաճիին, որ ինծի ցոյց տուաւ Օշինի օծման դրամներու դանձ մը: Տիկին Գափամաճի ազնուօրէն ամբողջ դրամագիւտը ինծի յանձնեց ուսումնասիրութեան համար: Դրամագիւտին ուր եւ երբ գտնուիլը կը մնայ անծանօթ, բայց ան կը բաղկանար 129 կտորներէ, որուն, սակայն, 12 հատը ծախուած ըլլալով, այս յօդուածը նուիրուած է մնացեալ 117 կտորներուն:

Օծման դրամներու գոյութիւնը ուրբինեան հասարակ դրամներու շարքին մէջ շատ հետաքրքրական է եւ երբեմն կը ներկայացնէ առեղծուած մը, որ ցարդ կարելի չէ եղած լուծել գոհացուցիչ կերպով:

Հասկնալի է որ երբ իշխան Լեւոն Բ. (1186-1198 թթ.) թաղաւոր օծուեցաւ 1198 թ.ին եւ հիմնեց հայկական նոր հարստութիւն մը, ան օծման դրամներ հատանեց, յաւերժացնելու համար պատմական այդ դէպքը եւ նոյն ատեն՝ յայտարարելու համար իր ժողովուրդին եւ թէ աշխարհին որ ինք թագաւոր օծուած է: Օծման դրամին ահողմին(1) (obverse) վրայ կը տեսնուի Լեւոնը, որ

1) Հայերէն լեզուի մէջ դրամի obverse եւ reverse բառերը կը պակսին եւ այդ իսկ պատճառով միշտ Ա. կողմը եւ Բ. կողմը, այսինքն՝ առաջին կողմը, երկրորդ կողմը մկարագրական բառերը գործածուած են: Ընթերցողը կը մերժ երբ մեմբ երկու բառերը միացնելով կը ստեղծենք ահողմ (obverse) եւ բեկողմ (reverse)

ծունկի եկած է Գրիստոսի առջեւ, իսկ երկինքէն աղանի մը վար կ'իջնէ, եւ կամ՝ լոյսի ճառագայթներ վար կը ցոլան օրհնելով այդ դէպքը: Կան նաեւ ուրիշ օժման դրամներ, որոնց վրայ կը տեսնուի աջ մը, որ կը պսակէ թագաւորը: Դրամին բեկողմին (reverse) վրայ կը տեսնուին երկու առիւծներ՝ կռնակ կռնակի, որոնք իրարու կը նային, և որոնց մէջտեղ կանգնած է երկաթեւ երկար խաչ մը:

Ընդունուած է որ Լեւոն այս դրամները հատանեց իր թագաւորութեան առաջին տարին: Անոնք սահաւաթիւ են(2) եւ հեղինակին դիրքին մէջ յիշատակուած 4000-է աւելի արծաթներուն միայն 120-ը օժման դրամներ են(3): Այս համեմատութիւնը կը շեշտէ այն կարծիքը թէ Լեւոնի օժման դրամները հատանուած են անոր թագաւորութեան առաջին տարուան միջոցին միայն:

Լեւոն Ա.ի յաջորդող թագաւորներէն ոչ Հեթում Ա. եւ ոչ ալ անոր զաւակը՝ Լեւոն Բ. օժման դրամներ հատանցին:

Երբ Լեւոն Բ. մեռաւ 1289 թ.ին, անոր յաջորդեց իր որդին՝ Հեթում Բ.ը, որ թէեւ կարող անձ մըն էր, բայց նախընտրեց կրօնական կեանքը, եւ 1293 թ.ին զահը յանձնեց իր եղբոր՝ Թորոսին: Թորոս իշխեց իբր փոխանորդ թագաւորին եւ ո'չ թէ իբր թագաւոր եւ այդ պատճառով ալ դրամ չհատանեց:

1296 թ.ին, Հեթում Բ. եւ Թորոս Կ. Պոլիս դացին ներկայ ըլլալու համար իրենց ջրով եւ Բիւզանդիոնի կայսեր որդւոյն պսակադրութեան: Անոնց բացակայութեան՝ յաջորդ եղբայրը՝ Սմբատ, ինքզինքը թագաւոր հռչակեց եւ չենք դիտեր ինչ միջոցներով յաջողեցաւ թէ՛ կաթողիկոսին եւ թէ՛ թաթար մեծ խան՝ իշխան Ղազանին հաւանութիւնը ստանալ: Երբ Հեթում եւ Թորոս Կ. Պոլսէն վերադարձան, Սմբատ զանոնք բանտարկեց եւ շատ չանցած՝ Թորոսը սպաննեց եւ Հեթումը կուրցուց, անոր աչքերը տաղելով:

բառերը: Անցեալիմ՝ corpus (ամբողջական գրութիւններու հաւաքածոյ) բառը գրեցիմք պարզապէս «ֆօրփուս», եւ մերկայիս այս բառը կը գործածուի հայերէն գրամագիտական գրութիւններու մէջ:

2) Ինձի կը տեղեկացուի թէ վերջերս Լեւոնի օժման դրամներու մեծ գտնւմը գտնուած է, որ կը բաղկանայ 3500 կտորներէ: Այս լուրը տակաւին չէ հաստատուած:

3) Paul Z. Bedoukian, *Coinage of Cilician Armenia*, New York, 1962, pp. 139-144. Զարեհ Պ. Պտուկեան, *Կիլիկեան Հայաստանի Դրամները*, Վիեննա, 1963, էջ 139-144:

Չորրորդ եղբայրը՝ Կոստանդին, Սմբատին արարքը անտանելի դռնելով, անոր դէմ ապստամբեցաւ եւ յաջողեցաւ զայն բռնել եւ բանտարկել: Հեթում բանտէն ազատուեցաւ, բայց կոյր Ըլլալուն, թոյլ տուաւ որ Կոստանդին թաղաւորէ: Սակայն շուտով Հեթումին աչքերը բացուեցան եւ հայ ժողովուրդը եւ իշխանները ցանկացին իրենց նախկին օրինաւոր թաղաւորը դահին վրայ նստեցնել: Ժողովուրդը եւ ասպետները միացան Հեթումին եւ յաջողեցան յաղթել Կոստանդինի ու Սմբատի: Երկու ապստամբները աքսորուեցան Կ. Պոլիս, ուր մնացին մինչեւ իրենց մահը:

Գիտենք որ Հեթում Բ. որեւէ արծաթ դրամ չհատանեց, այլ դոհացաւ պղինձ եւ փոքր արծաթապղինձ դրամներով:

Հետաքրքրական է նկատել որ թէ Սմբատ եւ թէ Կոստանդին հատանեցին զեղեցիկ եւ բարձր արծաթի զտութեամբ դրամներ: Երկուքին ալ դրամները Լեւոն Բ.ի վերջին դրամներէն աւելի ծանր եւ աւելի արծաթ պարունակող դրամներ են: Նոյնպէս անոնց դրամները Հեթում Բ.ի յաջորդող Լեւոն Գ.ի դրամներէն շատ աւելի բարձր են թէ կշիռքով եւ թէ արծաթի պարունակութեամբ: Կոստանդին Նոյնիսկ հատանեց ոսկիէ դրամներ:

Սմբատի արծաթները կը նմանին Լեւոն Ա.ի դրամներուն, թերեւս ծանուցանելու համար հայ ժողովուրդին թէ ինքը անոր արժանաւոր յաջորդն է: Սմբատ ունի երկու տեսակ արծաթներ, մէկուն ակողմին (obverse) վրայ կը տեսնենք թաղաւորը բազմած առիւծագորգ դահին վրայ, աջ ձեռքով բռնած խաչ մը, եւ շուշան մը՝ ձախով, ճիշդ Լեւոն Ա.ի դրամներուն նման: Երկրորդ տեսակի դրամներուն ակողմին (obverse) վրայ կը տեսնենք նոյն պատկերը, բայց հոս՝ ձախ ձեռքով թաղաւորը բռնած է երկսայրի տապար մը, որ յենած է ուսին վրայ: Երկու տեսակներուն ալ բեկողմին (reverse) վրայ կը տեսնենք Լեւոնի երկու առիւծները, կրկնաթեւ երկար խաչով: Երկու տեսակ դրամներուն կշիռը եւ համեմատական կշիռը (specific gravity) իրարմէ շատ չեն տարբերի, այնպէս որ չենք կրնար ըսել թէ առաջին տեսակը օժման դրամ է իսկ երկրորդը՝ հասարակ: Այսպէս՝ հեղինակին հաւաքածոյէն առնուած երկու տեսակ մաքուր դրամները հետեւեալ չափերը ունին՝

Լեւոն Ա.ի դրամներուն նմանող Սմբատի դրամներ(4).

4) Համեմատական կշիռը (specific gravity) ցոյց կու տայ դրամին արծաթի գուռքիւնը: Այսպէս, արծաթի եւ պղինձի խառնուրդ մը, որ 10.35 համեմատական կշիռ ունի կը պարունակէ հարիւրիմ 92 արծաթ: Իսկ 9.95 համեմատական կշիռ ունեցողը հազիւ հարիւրիմ 70 արծաթ ունի:

1.—	Կշիռ	2.9100	կրամ :	Համեմատական	կշիռ	10.32 :
2.—	»	3.0209	» :	»	»	10.30 :
3.—	»	2.7473	» :	»	»	9.70 :

Երկսայրի տապարով Սմբատի դրամներ .

1.—	Կշիռ	2.5905	կրամ :	Համեմատական	կշիռ	10.10 :
2.—	»	2.6780	» :	»	»	9.85 :
3.—	»	3.0056	» :	»	»	10.20 :
4.—	»	2.3732	» :	»	»	9.80 :
5.—	»	3.0900	» :	»	»	10.17 :

Կոստանդին Ա.ի դրամներն ալ ընդհանրապէս լաւ որակով են , բայց շատ հազուադիւտ ըլլալնուն կարելի չէ անոնց կշիռը եւ համեմատական կշիռը հոս ներկայացնել :

Թէ Սմբատի դրամները եւ թէ Կոստանդինի դրամները աւելի չաւ են թէ՛ կշիռով եւ թէ՛ արծաթի զտութեամբ , քան թէ Լեւոն Բ.ի վերջին շրջանի արծաթները : Թերեւս ապստամբ թաղաւորները փորձ մը ըրին երկրին մէջ շրջաբերութեան մէջ եղող արծաթներուն որակը բարձրացնելու :

Կը տեսնենք որ իրենց յաջորդող Լեւոն Գ.ի (1301–1307 թթ.) դրամները թէ կշիռով եւ թէ որակով անկում մը կրեցին : Անոնց յաջորդող գրեթէ բոլոր թագաւորները կամաց կամաց թէ՛ դրամին կշիռը եւ թէ՛ արծաթին պարունակութիւնը նուազեցուցին : Ասիկա պարզապէս քաղաքական կացութեան անկման հետեանքն էր , եւ կը պատկերացնէր երկրին տնտեսութեան քայքայումը :

Այս պայմաններուն տակ զարմանալի է տեսնել Օշին թագաւորին բազմաթիւ արծաթներուն շարքին կարգ մը հազուադիւտ դրամներ , որոնք տիպով ճիշդ Լեւոն Ա.ի արծաթներուն կը նմանին : Պիտի տեսնենք որ նոյն ատեն անոնք թէ կշիռով եւ թէ արծաթի զտութեամբ կը հաւասարին նաեւ Լեւոնի դրամներուն : Թուականէս տասը տարիներ առաջ այս դրամները հազուադիւտ էին եւ հեղինակին դիրքին մէջ(5) յիշատակուած 200-է աւելի արծաթներուն հազիւ 13 հատը այս տեսակ են , եւ որոնք կոչուած են օծման դրամներ : Վերջին տարիներու ընթացքին հազարաւոր ուրբինեան դրամներ յայտնաբերուեցան եւ անոնց շարքին՝ բազմաթիւ օշիններ : Այսպէս , 1967 թ.ին հեղինակին ձեռքը անցաւ օծման դրամներու փոքրիկ (17 կտոր) զանձ մը : Հոս կու տանք այս դրամներուն եւ հեղինակին հաւաքածոյէն առնուած մաքուր օծման դրամներու եւ հասարակ արծաթ թագաւորիններուն կշիռն ու համեմատական կշիռը :

5) Տես՝ Զ. Պտուկեան, Կիլիկեան Հայաստանի Դրամները, էջ 353-364 :

Օժման դրամներ (Հեղինակին դրամագիւտէն) .

№	Կշիռ	Կրամ	Համեմատական	Կշիռ	Գումար
1.-	2.8819	կրամ :	Համեմատական	Կշիռ	9.94 :
2.-	2.9264	» :	»	»	9.80 :
3.-	2.9641	» :	»	»	9.80 :
4.-	2.9021	» :	»	»	10.05 :
5.-	2.9446	» :	»	»	10.035 :
6.-	2.8250	» :	»	»	10.20 :

Օժման դրամներ (Հեղինակին Հաւաքածոյէն) .

№	Կշիռ	Կրամ	Համեմատական	Կշիռ	Գումար
7.-	2.6300	կրամ :	Համեմատական	Կշիռ	10.60 :
8.-	2.6723	» :	»	»	10.21 :
9.-	2.9676	» :	»	»	10.30 :
10.-	2.9797	» :	»	»	10.27 :
11.-	2.8667	» :	»	»	10.04 :

Հասարակ արծաթ թաղուորիներ .

№	Կշիռ	Կրամ	Համեմատական	Կշիռ	Գումար
1.-	2.4166	կրամ :	Համեմատական	Կշիռ	9.30 :
2.-	2.4386	» :	»	»	9.40 :
3.-	2.1331	» :	»	»	8.90 :
4.-	2.3770	» :	»	»	9.50 :
5.-	2.3651	» :	»	»	9.46 :
6.-	2.3696	» :	»	»	9.10 :
7.-	2.4982	» :	»	»	9.63 :
8.-	2.2198	» :	»	»	9.61 :

Հոս կը տեսնուի որ մեծ տարբերութիւն կայ թէ կշիռին եւ թէ արծաթի զտութեան մէջ՝ օժման դրամներուն եւ թաղուորիներուն միջեւ: Տարակոյս չկայ որ այս երկուքը իբր նոյն տեսակի դրամ չէին նկատուեր եւ տարբեր արժէք կը ներկայացնէին շուկային վրայ: Իսկապէս եթէ 11 օժման դրամներու հասարակ (average) արծաթի պարունակութիւնը հաշուենք, կը տեսնենք որ հատը 2.3 կրամ արծաթ կը պարունակէր, իսկ թաղուորինը՝ միայն 1.2 կրամ: Ուրիշ իմաստով, օժման դրամները կրկին անգամ աւելի արժէք կը ներկայացնէին, քան թէ հասարակ թաղուորիները:

Այս առիթով հարց կը ծագի թէ ինչո՞ւ համար Օշին հատանց այս բարձրորակ օժման դրամները: Ան կրնար թաղուորիին որակով բայց Լեւոն Ա.ի տիպով դրամներ հատանել, եւ այսպէսով արքունի դանձին արծաթը խնայել եւ նոյն ատեն յայտարարել իր թաղաւոր օծուիլը: Ուրեմն կային ուրիշ պատճառներ Լեւոն Ա.ի կամ Զապէլ-Հեթումի կշիռով եւ որակով դրամներ հատանելու համար:

ՕՇԻՆԻ ՕԽՄԱՆ ԱՐԽԱԹՆԵՐԸ



1.



2.



11



114.



30



49



65



75



86



103



110



105










ԴՐԱՄԱԳԻՏԻՏԻՆ ՔԱԹԱԼՈԿԸ

ԱԻՆԻՆ ԹԱԳԱԻՈՐՀԱՅՈՅ Է՝ *

(Խաչին Ձարի ԿոշԿ Յ Գիրք)

ԲԵԿՈՉՄ

Թիվ		Խաչը	Տոյն կնիքը
1	ԿԱՐՈՂՈՒԹԵԱՄ ԱԾ Է		18,19,20, 1 89,90,91,92
2	ՆԱՐՈՂՈՒԹԲՆ ԱԾՈՅ		
3	" "		
3X	" "		3,3X,101
4	" "		
5	" ԱՍՍ		5,23a
6	" " Է		
7	" " "		6,7,8,66a,116a, 100,104,105,106
8	" " "		
9X	ԿԱՐՈՂՈՒԹՔ ԱԾՈ		9X,103b,107
9	" ԿՃՈ		9 103c















* Բոլոր աղագմերը նայն կնիքին են:

X Բոլորն ալ 17 արժաքներուն դրամագիտին են:

ԱՆՆԻ ԹԱԳԱԽՈՐ ՀԱՅՈՅ Ի
(Առաջն Յ Գրի)

10	ԿԱՐՈՂՈՒԹՔՆ ԱՍՆ	+	10, 11, 96, 97,
11	" "	"	98, 99X, 110, 111
12	" "	"	8, 80, 81, 82, 83
13	" "	"	13, 14, 58, 59
14	" "	"	60, 61, 62
15	" ԱՅ Է	+	15, 15X,
15X	" "	+	34, 35, 36
16	" "	+	16, 95
17	ԿԱՐՈՂՈՒԹԵԱԲ ԱՅՈՅ	+	17, 86
18	" ԱՅ Է	+	1, 18, 19, 20
19	" "	+	89, 90, 91, 92
20	" "	+	
21	ԿԱՐՈՂՈՒԹՔՆ ԱՍՆ		21, 85
22	" ԱՍՆ	+	
23	" ԱՍՆՈ՞	"	23, 37, 38, 47, 102
23a	" ԱՍՆ		5, 23a,

ԱԻԵԻՆ ԹԱԳԱՒՈՐ ՀԱՅՈՑ
(454 ՎԷ Ձախ Առիւթիւն Վրայ)

24	ԿԱՐՈՂՈՒԹԱՆ ԱՅ Է		24, 25, 40
25	" " " "		
26	" " " "		26, 27, 28, 45, 46
27	" " " "		50, 51, 52, 53, 53X
28	" " " "		
29	" " " "		
30	" " " "		30, 42, 43, 44, 49
(Առիւթիւն Վրայ առաջիկ ԿԿԿԻ)			
31	" " " "		
32	" " " "		31, 32, 33
33	" " " "		
34	" " " "		
35	" " " "		15, 15X, 34, 35, 36
36	" " " "		
37	" " " "		23, 37, 38 47, 102
38	" " " "		
39	" " " "		
40	" " " "		24, 25, 40
41	" " " "		41, 48

ԱՌԵՒՆ ԲԱԳԱՒՈՐ ՀԱՅՈՅ

42	ԿԱՐՈՂՈՒԹՔՆ ԱՅ Է			
43	"	"	"	30, 42, 43
44	"	"	"	44, 49
45	"	"	"	
46	"	"	"	
47	"	"	"	47, 27, 28, 84, 108
48	"	"	"	41, 48
49	"	"	"	
Ճոյն Ակոյսը Տարբեր Կնիւոյ)				
50	"	"	"	
51	"	"	"	51, 52
52	"	"	"	53, 54
53	"	"	"	53X, 28
53X	"	"	"	26, 27,
53X	"	"	"	45, 46
53X	"	"	"	
54	"	"	"	523, 37, 38,
55	"	"	"	54, 47, 102
56	"	"	ԱՍՆ	55, 30, 42, 43, 4
				44, 49

ԱԻՆԻՆ ԹԱԳԱԽՈՐ ՀԱՅՈՑ

57	ՆԱՐՈՂՈՒԹԲՆ	ԱԾՈՅ	✦	57, 57x
57x	"	"		
58	"	ԱՍՆ		
59	"	"	✦	} 13,14 58, 59, 60 61, 62
60	"	"	✦	
61	"	"		
62	"	"		
63	"	ԱՍՆՈ	✦	63, 94
64	"	ԱՅ Է	✦	64, 65, 67, 68
65	"	"	✦	
66	"	ԱԾՈՅ	✦	
	"	ԱԾՈՅ 5	✦	

ԱԻՆԻՆ ԹԱԳԱԽՈՐ ՀԱՅՈՑ

67	"	ԱՅ Է	✦	64, 65, 67, 68
68	"	"	✦	
69	"	ԱՍՆ	✦	

ԱԻՆԻՆ ԹԱԳԱԽՈՐ ՀԱՅՈՑ

70	"	ԱԾՈ	✦	70, 71
71	"	"	✦	
72	"	ԱՅՈ	✦	72, 116
73	"	ԱԾՈ	✦	
74	"	ԱԾՈՅ		

ԱԻՆԻՆ ԹԱՎՈՐ ՆԱՅՈՂ

75	ԿԱՐՈՂՈՒԹԲԵՆ ԱՍՍԻ		
76	"	"	} 75,76 77,78,93
77	"	"	
78	"	"	
79	"	"	
80	"	ԱՍՍ	} 80,81, 82,83,
81	"	"	
82	"	"	
83	"	"	
84	"	"	
85	"	"	21,85
86	ԿԱՐՈՂՈՒԹԵԱՐ ԱՅՈՅ		17
87	"	"	88
88	"	"	87
89	"	ԱՅԻ	} 1, 89,90 91,92
90	"	"	
91	"	"	
92	"	"	
93	ԿԱՐՈՂՈՒԹԲԷ ԱՍՍԻ		75,76,77,78,93
94	"	ԱՍՍԻ	63,94

ԱՌԷԻՆ ԹԱԳԱԻՈՐ ՀԱՅՈՑ

95	ԿԱՐՈՂՈՒԹԲԸ ԱՅ Է	+	95,96
96	" " ԱՍՄ	+	
97	" " "		98, 98x, 97 98x, 96, 110, 111
98	" " "	+	
98x	" " "		
98x	" " "		
99	" " "		5x, 99

ԱՌԷԻՆ ԹԱԳԱԻՈՐ ՀԱՅՈՑ

	(Խաչին Ձախ Կոշէ 3 Գիրը)		3, 3x, 6, 7, 8, 66a, 100 104, 105, 106
100	" " ԱՅՈՅ Է	+	
101	" " ԱՅՈՅ	+	
101x	" " ԱՍՄ	+	

ԱՌԷԻՆ ԹԱԳԱԻՈՐ ՀԱՅՈՑ

102	ԿԱՐՈՂՈՒԹԲԸ ԱՅ Է	+	23, 37, 38 47, 102
-----	-----------------	---	-----------------------

ԱՌԷԻՆ ԹԱԳԱԻՈՐ ՀԱՅՈՑ

103	ԿԱՐՈՂՈՒԹԲԸ ԱՍՄՈՒ	+	
	ԱՌԷԻՆ ԹԱԳԱԻՈՐ ՀԱՅՈՑ		
103a	ԿԱՐՈՂՈՒԹԲԸ ԱՅՈՅ	+	4, 103a
103b	" " ԱՅՈՒ	+	103b, 107, 5x
103c	" " ԱՅՈՒ	+	9, 103c

ԱՒԵՒՆ ԹԱԳԱՒՈՐ ՀԱՅՈՅ
(ԿԳՈՒԿԻԿ ՈՐ Կ Յ ԴԱՂԿԻՆ ԱՏԶ)

104	ԿԱՐՈՂՈՒԹԲՆ ԱՅՈՅ Է			} 6.7.8,100 104,105,106 66a,116a
105	"	"	" ✕	
106	"	"	" ✕	
107	ԿԱՐՈՐՈՒԹԲ ԱՅՈՒ		✕	5X, 103b.107
108	"	"	✕	
109	ԿԱՐՈՂՈՒԹԲՆ ԱՅՈՒ		✕	
109x	"	"	✕	
110	"	ԱՍՍ	✕	} 10, 11, 96, 97 98, 99x, 110, 111
111	"	"	✕	
112	ԿԱՐՈՂՈՒԹԲ ԱՅՈՒ			
	ԱՒԵՒՆ ԹԱԳԱՒՈՐ ՀԱՅՈՅ (ԽԱՂԻՆ ՁԱԽ ԿՈՂԸ Յ ԳԻՐԸ)			
113	ԿԱՐՈՂՈՒԹԲՆ ԱՅՈՅ		✕	} 113, 114
114	"	"	✕	
115	"	"	" ✕	
116	"	ԱՅՈ	✕	72, 116
116a	"	ԱՅՈՅ Է		} 6, 7, 8, 100, 104 105, 106, 116a, 66a
	ԱՒԵՒՆ ԹԱԳԱՒՈՐ ՀԱՅՈՅ (ՕՐԻՑՈՂ ԱԿԸ ԽԱՂԻՆ ՎԵՐԵ) Ի			
117	ԿԱՐՈՂՈՒԹԲՆ ԱՅ Է		✕	

Գիտենք որ ռուբինեան շրջանին հայկական դրամները միշտ նոյն արժէքը չեն ունեցած: Վաճառականները եւ լուծալափոխները դրամներուն արժէքը կ'որոշէին անոնց ոսկիի կամ արծաթի պարունակութեան համեմատ: Թղթադրամ դոյութիւն չունէր, այնպէս որ շուկայի արժէքները հիմնուած էին ոսկիին կամ արծաթին վրայ:

Այսպէս՝ միջնադարեան փաստաթուղթերու մէջ կը հանդիպինք հայկական երեք դրամներու յիշատակութեան, Bissancios Stauratos (խաչանիչ դրամներ), Daremos Novos (նոր դրամներ) եւ Taccolini (թաղուորիներ): Հաստատուած է որ առաջին տեսակները Լեւոն Ա.ի եւ Հեթում-Չապէլի արծաթ դրամներն էին, որոնք երկար խաչ մը ունին(6): Այս դրամները կը պարունակէին հարիւրին 90 արծաթ եւ կը կշռէին մօտ 2.90 կրամ: Ուրեմն կը պարունակէին մօտ 2.6 կրամ արծաթ: Իսկ Լեւոն Բ.ի դրամները, որոնք որակով աւելի ցած ըլլալուն «նոր դրամ» կոչուեցան, կը կշռէին մօտ 2.60 կրամ եւ արծաթի դոյութիւնը հարիւրին 70-էն պակաս էր: Ուրեմն արծաթի պարունակութիւնը միայն 1.8 կրամ էր: Անկէ ետք, Լեւոն Գ.էն սկսելով, դրամները կրկին որակով անկում կրեցին, եւ կոչուեցան թագուորիներ: Ասոնք արժէքով ժամանակի ընթացքին փոփոխուաներու ենթակուեցան եւ անոնց արժէքը շուկայի վրայ կը հաստատուէր արծաթի պարունակութեան համեմատութեամբ(7):

Կը տեսնենք որ Սմբատի վերոյիշեալ դրամները պատկերով Bissancios Stauratos (երկար խաչով դրամ) էին, եւ նաեւ արծաթի պարունակութիւնը 2.0-էն 2.3 կրամ էր: Ուրեմն՝ Սմբատ կը ջանար նախկին՝ Լեւոն Ա. եւ Հեթում-Չապէլի դրամական դրութիւնը վերահաստատել: Նոյնը կ'երեւի փորձեց Կոստանդին, բայց անոր յաջորդող Լեւոն Գ.ի արծաթ դրամները որակով շատ աւելի ցած թագուորիներ էին, եւ հազիւ 1.3 կրամ արծաթ կը պարունակէին:

Երբ Օշին դահ բարձրացաւ 1308 թ.ին, շուկայի վրայ շրջաբերութեան մէջ էին երեք տեսակ արծաթ դրամներ, երեք տարբեր արժէքներով: Ժամանակակից բազմաթիւ փաստաթուղթեր կան, որոնք կը հաստատեն այս կէտը(8): Այնպէս կ'երեւի թէ Օշին հատանեց իր Bissancios Stauratos կամ խաչանիչ դրամները իբր որոշ տեսակի դրամներ, թերեւս իր թագադրութեան առաջին տարուան ընթացքին, բայց ամէն պարագայի՝ քիչ քանակով, իսկ իր դրամներուն մեծամասնութիւնը թագուորին էին, նմանութեամբ իր նախոր-

6) Զ. Պտուկեան, «Համդէս Ամսօրեայ», ՀԳ, 1959, էջ 241-9:

7) Տես՝ Զ. Պտուկեան, Կիլիկեան Հայաստանի Դրամները, էջ 126:

8) V. Langlois, *Cartulaire*, Venice, 1863.

դին՝ Լեւոն Գ.ի, եւ կամ՝ իրեն յաջորդող Լեւոն Դ.ի թագուորիններուն :

Եզրակացնելով կրնանք ըսել ուրեմն թէ երկար խաչով դրամները բարձր արժէք ներկայացնող որոշ դրամներ էին, որոնք հասանուեցան Լեւոն Ա.ի, Հեթում-Չապէլի, Սմբատի եւ քիչ քանակութեամբ Վերջին անգամ Օշինի կողմէ :

Պատճառ մը չկայ Օշինի այս դրամները օժման դրամ կոչելու, քանի որ ուրիշ ոեւէ թագաւոր օժման դրամ չէ հասանած քացի Լեւոն Ա.է, որ Ռուբինեան Հարստութեան առաջին օժուած թագաւորը ըլլալով, այս դէպքը դրամներով յայտարարեց :

Օշինի այս դրամագիւտը՝ ըլլայ օժման դրամներու, կամ խաչանիշերու (Bissancios Stauratos) դանձ մը, մեծ արժէք կը ներկայացնէ եւ կը լուսարանէ մեր դրամագիտութեան պատմութեան մութ էջերէն մէկը :

A HOARD OF CORONATION TRAMS OF OSHIN (1308-1320)

PAUL Z. BEDOUKIAN

(Summary)

The study of a hoard of 129 so-called «coronation» trams of Oshin has led to certain conclusions regarding the raison d'être of these rare coins.

An analysis of weights and silver content (through specific gravity determinations) showed that the coronation trams contain nearly twice as much silver as the common Oshin takvorins. Both in style and silver content, the former are in the same category as the silver trams of Levon I (1198-1218) and of Hetoum-Zabel (1226-1270). Curiously enough, during his short reign, Sempad (1296-1298) also struck coins of the same type and about the same silver content.

The trams of Levon I, Hetoum-Zabel, Sempad, and the coronation trams of Oshin can be identified by the presence of a long cross on the coin, referred to as « stauratos » by contemporary documents.

It is considered most likely that Oshin made an attempt to continue the issuance of the valuable stauratos and at the same time issued silvers of much lower value of the type struck by his predecessor (and successors). The issuance of silvers of two denominations explains the use of the terms « stauratos » and « takvorins » in medieval commercial transactions.